ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

**08 հոկտեմբերի 2025թ-ին կնքված N «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-26/1-1» ծածկագրով՝**
**Պետության կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պետական գնման**
**պայմանագրի**

ք.Երևան «29» 01 2026թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ, վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գարիկ Բոշյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷՄՄԻ Ավտոհաուս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Սուսաննա Թադևոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 18-րդ կետը, ինչպես նաև «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-26/1-1» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.16 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### *1. Համաձայնագրի առարկան*

1.1 Հաշվի առնելով, որ 2026 թվականի համար հատկացվել է 3 500 000 /երեք միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին հաստատել Պայմանագրի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն Տեխնիկական բնութագիր-Գնման ժամանակացույցի՝ հավելված 1-ի և Վճարման ժամանակացույցի՝ հավելված 2-ի:

1.2 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում 2026թ-ի հունվարի 12-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

### *2. Այլ պայմաններ*

2.1 Համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև Համաձայնագիր կնքելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը իրականացվում է այդ Համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.2 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.3 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.5 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

### *3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Վարչապետի աշխատակազմ | «ԷՄՄԻ Ավտոհաուս» ՍՊԸ |
| ք. Երևան, Հանրապետության հրապարակ Կառավարական տուն 1 | ք.Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Էզրաս Հասրաթյան 9/3 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Ակբա Բանկ» ԲԲԸ |
| Հ/Հ 900011022085 | Հ/Հ 220302940659000 |
| ՀՎՀՀ 02505554 | ՀՎՀՀ 01337147 |
| ________ / ստորագրություն / | ________ / ստորագրություն / |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված թիվ 1*
*«08» հոկտեմբերի 2025թ. կնքված*
*ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-26/1-1 ծածկագրով պայմանագրի*
*« 29 » 01 2026թ. կնքված N 2 Համաձայնագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախա-տեսված չափա-բաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | Պայմանագրի ընդհանուր առավելագույն գինը/ՀՀ դրամ | Ընդ-հանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 1 | 50111130/9 | Կիա Օպտիմա 2012 ավտոմեքենայի /1 հատ/ վերանորոգման ծառայություն, համաձայն Պայմանագրի հավելված 1.1 | դրամ | 1200000 | 1 | ք.Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Էզրաս Հասրաթյան 9/3 | 2026թ. հունվարի 12-ից դեկտեմբերի 25-ը |
| 2 | 50111130/10 | Ֆորդ Տրանզիտ 2011 ավտոմեքենայի /1 հատ/ վերանորոգման ծառայություն, համաձայն Պայմանագրի հավելված 1.1 | դրամ | 1200000 | 1 | ք.Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Էզրաս Հասրաթյան 9/3 | 2026թ. հունվարի 12-ից դեկտեմբերի 25-ը |
| 3 | 50111130/11 | Հյունդայի H1 2010 ավտոմեքենայի /1 հատ/ վերանորոգման ծառայություն, համաձայն Պայմանագրի հավելված 1.1 | դրամ | 1100000 | 1 | ք.Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Էզրաս Հասրաթյան 9/3 | 2026թ. հունվարի 12-ից դեկտեմբերի 25-ը |

* Ծառայությունները կմատուցվեն ըստ Պատվիրատուի պահանջի՝ Կատարողին պահանջի ծագման մասին տեղեկացնելու պահից 1 օրվա ընթացքում՝ առանց պահեստամասի փոխարինման ծառայության և առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ պահեստամասի փոխարինման ծառայության դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխհամաձայնությամբ ավելի երկար ժամկետ է սահմանվում:

** Կատարողը պարտավոր է Պատվիրատուի պահանջով տրամադրել տեղեկանք՝ Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայան ներկայացնելու օրվա և ժամի մասին:

*** Պարտադիր պայման է՝ ընթացիկ նորոգման համար օգտագործվող պահեստամասերի, յուղերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի առկայությունը, ինչպես նաև չօգտագործված լինելը սպասարկման կետում:

**** Տեխնիկական սպասարկման կայանը պետք է գտնվի Երևան քաղաքի տարածքում, ինչպես նաև բոլոր արհեստավորները և մասնագետները պետք է լինեն մեկ վայրում

***** Վճարումը կիրականացվի փաստացի մատուցված ծառայության դիմաց:

****** Տեխսպասարկման կայանը պետք է հագեցած լինի առնվազն 5 հատ ամբարձիչով (домкрат)՝ առնվազն 3.5 տոննա բարձրացնելու կարողությամբ:

**Ծառայությունների մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գները ներկայացված են Պայմանագրի N 1.1 հավելվածում**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554
_______________________
/ ստորագրություն /
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«ԷՄՍԻ Ավտոհաուս» ՍՊԸ
ք.Երևան, Քանաքեռ-Զեյթուն,
Էզրաս Հասրաթյան 9/3
«Ակբա Բանկ» ԲԲԸ
Հ/Հ 220302940659000
ՀՎՀՀ 01337147
_______________________
/ ստորագրություն /
Կ.Տ

*Հավելված թիվ 2*

*«08» հոկտեմբերի 2025թ. կնքված*
*ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-26/1-1 ծածկագրով պայմանագրի*
*« 29 » 01 2026թ. կնքված N 2 Համաձայնագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց առավելագույն վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդա-մենը |
| 1 | 50111130/9 | 1. Ավտոմեքենա-ների վերանորոգման ծառայություններ | - | 300000 | 300000 | 600000 | 600000 | 600000 | 900000 | 900000 | 900000 | 1200000 | 1200000 | 1200000 | 1200000 |
| 2 | 50111130/10 | 2. Ավտոմեքենա-ների վերանորոգման ծառայություններ | - | 300000 | 300000 | 600000 | 600000 | 600000 | 900000 | 900000 | 900000 | 1200000 | 1200000 | 1200000 | 1200000 |
| 3 | 50111130/11 | 3. Ավտոմեքենա-ների վերանորոգման ծառայություններ | - | 275000 | 275000 | 550000 | 550000 | 550000 | 825000 | 825000 | 825000 | 1100000 | 1100000 | 1100000 | 1100000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*
** Վճարումը կիրականացվի փաստացի մատուցված ծառայության դիմաց:

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու**
Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554

/ստորագրություն/
Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
«ԷՄՍԻ Ավտոհաուս» ՍՊԸ
ք.Երևան, Քանաքեռ-Զեյթուն,
Էզրաս Հասրաթյան 9/3
«Ակբա Բանկ» ԲԲԸ
Հ/Հ 220302940659000
ՀՎՀՀ 01337147

/ստորագրություն/
Կ.Տ